



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

0010. ք. Երևան. Հանրապետության հրապարակ  
Կառավարական տուն 3  
Հեռ.՝ 589080 Փաքս՝ 523200  
www.mud.am  
E-mail: info@mud.am

----- N -----

Ձեր N ----- ան -----

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի  
պաշտոնակատար պարոն Ա. Գևորգյանին

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի  
պաշտոնակատար պարոն Ա. Մովսիսյանին

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի  
պաշտոնակատար պարոն Գ. Բեգլարյանին

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի  
պետական կոմիտեի նախագահ պարոն Ե. Զախարյանին

Երևանի քաղաքապետ պարոն Տ. Մարգարյանին

Հայաստանի շինարարների միության նախագահ պարոն Գ. Գալստյանին

Հայաստանի ճարտարապետների միավորման նախագահ  
պարոն Մ. Մինասյանին

Հարգելի՛ պարոնայք,

Ձեր քննարկմանն է ներկայացվում “Լիցենզավորման մասին” Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծը:

Խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ քաղաքաշինության նախարարություն  
ներկայացնել նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Առդիր՝ 3 թերթ:

Նախարարի ժամանակավոր  
պաշտոնակատար՝

Ա. Կարապետյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**“ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ” ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** “Լիցենզավորման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի (27 հունիսի 2001 թվական, ՀՕ-193) 43-րդ հոդվածի երկրորդ մասի աղյուսակի 17-րդ բաժնի (“Քաղաքաշինության բնագավառ”) 2-րդ և 3-րդ կետերը “աշխատանքների” բառից հետո լրացնել “, գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տան համար նախատեսված հողամասի տարածքում, ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող բնակելի տները և օժանդակ նշանակության կառույցները, ավտոտնակները, ինչպես նաև այդ նպատակի համար նախատեսված հողամասերում մինչև 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունները, մինչև 100 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունները” բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

## 1. Իրավական ակտի հիմնավորումը

<p>“ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ” ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ” ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ</p>	
1.	<b>Անհրաժեշտությունը</b>
	Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության գործունեության ծրագրում կարևորված բնակելի շինարարության խթանման և գործարար միջավայրի բարելավման միջոցառումների պահանջներից:
2.	<b>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</b>
	<p>Գործող օրենսդրությամբ քաղաքաշինության բնագավառում բացի շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքներից մնացած աշխատանքները համարվում են լիցենզավորման ենթակա գործունեություն:</p> <p>Կապալային եղանակով իրականացվող շինարարության գինը ձևավորվում է կատարվելիք աշխատանքների ծավալների արժեքից՝ ներառյալ նյութերի արժեքները, վերադիր ծախսերը, հարկային պարտավորությունները:</p> <p>Կապալային եղանակով իրականացվող շինարարության գնի 35%-ը կազմում են հարկային պարտավորությունները և վերադիր ծախսերը:</p> <p>Հաշվի առնելով հանրապետությունում սոցիալական անբարենպաստ վիճակը, վերը նշված հանգամանքը լուրջ խոչընդոտ է հանդիսանում ՀՀ-ում անհատական բնակելի շինարարության ոլորտում՝ ընդհանուր առմամբ խանգարելով շինարարության բնագավառում տնտեսության աճին:</p>
3.	<b>Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը</b>
	Բնակելի շինարարության խնդիրը համարվում է ՀՀ կառավարության կողմից իրագործվող տնտեսական քաղաքականության կարևորագույն ոլորտներից մեկը: Այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները միտված են հատկապես մասնավոր սեկտորի կողմից բնակելի շինարարության գործարար միջավայրի բարելավմանը և դրա տեմպերի խթանմանը :
4.	<b>Կարգավորման նպատակը և բնույթը</b>
	“Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկից հանել անհատական բնակելի տան, օժանդակ նշանակության կառույցների, ավտոտնակների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրական նշանակության և հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների համար նախատեսված հողամասի տարածքում, ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող շինարարությունը և դրանց նկատմամբ իրականացվող շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացումը՝ համարելով դրանք չլիցենզավորված գործունեություն:
5.	<b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք</b>
	Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից:
6.	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	Օրենքի նախագծի ընդունումով հնարավորություն կտրվի տնտեսական եղանակով /առանց լիցենզավորված կազմակերպությունների/ կառուցել անհատական բնակելի տների հողամասի տարածքում օժանդակ կառույցները, տնտեսելով օբյեկտի կառուցման համար հաշվարկված նախահաշվային արժեքի 35%-ը՝ նպաստելով քաղաքաշինության բնագավառում տնտեսության էական աճին:
7.	<b>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)</b>
	-

**2. Իրավական ակտն ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին տեղեկանքը**

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չի առաջանում:

**3. Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք**

<b>Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք</b>	
1.	<b>Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը</b>
	-
2.	<b>Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը</b>
	Ստանձնած պարտավորություններ չկան:
3.	<b>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)</b>
	-

**4. Իրավական ակտի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին տեղեկանք**

<b>Տեղեկանք հասարակության մասնակցության մասին</b>	
1.	<b>Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը</b>
	Օրենքի նախագիծը կտեղադրվի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության <a href="http://www.mud.am">www.mud.am</a> կայքում:
2.	<b>Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին</b>
	Նախագծի փաթեթը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ճարտարապետների և շինարարների միությունների քննարկմանը:
3.	<b>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)</b>
	-